Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Մոտիվացիան որպես ուսուցման կարևորագույն մաս

Վերապատրաստող, մենթոր՝ Դ. Վարժապետյան

Ուսուցչի օգնական՝ Կ. Գալոյան

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……....3

ԳԼՈՒԽ 1 ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ……..……...5

1.1 Մոտիվացիա հասկացությունը և մոտիվացիայի վերաբերյալ մոտեցումները…....5

1.2 Մոտիվացիայի տեսակներն ու մակարդակները……..…….....6

ԳԼՈՒԽ 2 ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ……12

2.1 Մոտիվացիայի ձևավորումը տարրական դասարաններում……..…….....12

2.2 Մոտիվացիայի ձևավորումը ավագ դասարաններում…….....15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….....17

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...…19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Մոտիվացիան համարվում է մարդու ցանկացած գործունեության կարևոր բաղադրիչ, այն ներքին վիճակ է, ցանկություն, որն ակտիվացնում է վարքագիծը և ուղղորդում դեպի նպատակը, իսկ ուսուցումը հասարակության մեջ անհատի հաջող ռեալիզացման նախադրյալ է: Հետևաբար կարևոր է աշակերտի մեջ զարգացնել ուսուցման հանդեպ մոտիվացիան: Եվ այստեղ մենք բախվում ենք որոշակի խնդրի հասկանալով, որ խորհրդային տարիներից ժառանգություն ստացած կրթական համակարգը ժամանակակից աշխարհում դադարել է արդյունավետ համարվել: Աշակերտները կորցրել են ուսուցման հանդեպ իրենց մոտիվացիան: Այդ մոտիվացիան վերագտնելու համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչ դրդապատճառներ են ընկած նրա ուսուցման հիմքում, ըստ այդմ մշակել ուսուցման արդյունավետ ձևերի և մեթոդների համակարգ: Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ պարզելով աշակերտի մոտիվացիայի աղբյուրը՝ ուսուցիչները կկարողանան շատ ավելի արդյունավետ աշխատել դասարանում ՝ բարձրացնելով աշակերտների կրթության որակը: Կրթության մեջ աշակերտի մոտիվացիայի աղբյուր կարող է հանդիսանալ ուսուցչի կողմից լավ գնահատականի արժանանալը, ծնողների գովասանքին արժանանալը, տարիքակիցների հետ ցանկալի հարաբերություններ ձևավորելը, իսկ ավելի հասուն տարիքում դեռահասները կարևորում են անկախությունը, սեփական արժանապատվությունը հաստատելու ցանկությունը, իրենց ես-ը առաջնորդելու գաղափարը, իրենց ցանկություններն ու մտքերը արտահայտելու հնարավորությունը: Հետևաբար, այս ամենի բացակայությունն էլ պատճառ է հանդիսանում ուսումնական գործընթացում կրթական մոտիվացիայի նվազման ու անտարբերության:

Այսպիսով, հետազոտական աշխատանքում կսահմանենք, թե ինչ է մոտիվացիան, ինչպիսի առանձնահատկություններ ունի, կանդրադառնանք մոտիվացիայի տեսակներին ու մակարդակներին, կփորձենք բացահայտել և ներկայացնել աշակերտների տարիքային առանձնահատկություններն ու սովորելու մոտիվները և վերջում կգանք այն եզրահանգման, որ մոտիվացիան ուսուցման կարևորագույն նախադրյալներից մեկն է, և որ ուսուցիչները կարող են հասնել ցանկալի վերջնարդյունքների միայն այն դեպքում, երբ բացահայտեն յուրաքանչյուր աշակերտի ուսուցման դրդապատճառներն ու մոտիվները:

Հետազոտական աշխատանքի նպատակը: Հետազոտության նպատակն է ներկայացնել մոտիվացիայի տեսական հիմքերը, ինչպես նաև բացահայտել և ցույց տալ տարբեր տարիքային առանձնահատկություններ ունեցող աշակերտների մեջ մոտիվացիայի զարգացման կարևորությունը ուսուցման որակի բարձրացման գործում:

Հետազոտության նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները՝**

- Ուսումնասիրել մոտիվացիայի տեսական հիմքերը,
- Անդրադառնալ մոտիվացիայի տեսակներին և 5 մակարդակներին,
- Բացահայտել տարբեր տարիքային առանձնահատկություններ ունեցող աշակերտների ուսուցման մոտիվները.
- Ապացուցել մոտիվացիայի կարևորությունը ուսուցման որակի բարձրացման գործում:

Հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում օգտագործվել են մանկավարժական գիտահետազոտական մեթոդներ՝ գիտամանկավարժական գրականության ուսումնասիրություն, դիտում, զրույց, համադրում, ընդհանրացում, համակարգում:

Աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքը կազմում է 19 համակարգչային էջ:

ԳԼՈՒԽ 1 ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1 ՄՈՏԻՎԱՑԻԱ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Մարդկային վարքի մոտիվացիայի խնդիրը հետաքրքրել է գիտնականներին դեռևս հնուց: Բազմաթիվ հին փիլիսոփաների ու գիտնականների աշխատություններում կարող ենք հանդիպել մոտիվացիայի վերաբերյալ շատ տեսություններ: Փորձենք անդրադառնալ դրանցից մի քանիսին՝ մոտիվացիայի մասին ընդհանուր գաղափար կազմելու նպատակով:

Մոտիվացիան առաջացել է լատիներեն <<movere>> բառից, որը թարգմանաբար նշանակում է շարժվել: Տերմինն առաջին անգամ օգտագործել է Ա. Շոպենհաուերը իր «Բավարար պատճառի չորս սկզբունքներ» հոդվածում: Մոտիվացիայի վերաբերյալ կարող ենք հանդիպել բազմաթիվ սահմանումների, ինչպիսին է՝ <<Մոտիվացիան մարդու կողմից այս կամ այն վարքագծի գիտակցված ընտրության գործընթացն է>> [3, էջ 89]:

Ներկայումս մոտիվացիան՝ որպես հոգեկան երևույթ, մեկնաբանվում է տարբեր ձևերով: Մի դեպքում, որպես գործոնների համախումբ, որոնք աջակցում և առաջնորդում են, այսինքն՝ որոշում են վարքագիծը (Կ. Մադսեն, Ժ. Գոդֆրուա), մեկ այլ դեպքում՝ որպես շարժառիթների համադրություն (Կ. Կ. Պլատոնով, 1986), երրորդում՝ որպես ազդակ, որը հանգեցնում է վարքի ակտիվությանը և որոշում է նրա ուղղվածությունը: Ամենից հաճախ գիտական գրականության մեջ մոտիվացիան համարվում է հոգեբանական պատճառների համադրություն, որով բացատրվում է մարդու վարքագիծը, դրա ծագումը, ուղղվածությունն ու գործունեությունը [8, էջ 65]:

Մոտիվացիայի հիմնական տեսությունները ձևավորվել են 19-րդ դարի երկրորդ կեսերից: Էվոլուցիոն տեսության հիմնադիր Չ. Դարվինը առաջիններից մեկն էր, ով ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ մարդու և կենդանիների մոտ առկա են բազմաթիվ ընդհանուր պահանջմունքներ և վարքի ձևեր: Այս տեսության ազդեցության տակ էլ հոգեբանության մեջ սկսվեց ինտենսիվորեն ուսումնասիրվել կենդանիների (Վ. Քելլեր, Է. Թորնդայք) և մարդու բնազդները (Զ. Ֆրոյդ, Վ. Մակդուգալ, Ի. Պ. Պավլով և այլն): Այս հետազոտությունների արդյունքում փոխվեց պահանջմունքի մասին պատկերացումները, և այդ հասկացությունը սկսվեց կիրառվել նաև մարդկանց վարքագիծը բացատրելու համար: Արդյունքում 20-րդ դարում արդեն առաջացան երկու նոր ուղղություններ՝ մոտիվացիայի վարքագծային և բարձրագույն նյարդային համակարգի գործունեության տեսությունները [6, էջ 518-524]:

Եվ խոսելով մոտիվացիայի տեսությունների մասին, մենք չենք կարող չանդրադառնալ անձի պահանջմունքներին: Ամերիկացի հետազոտող Հ. Մյուրեյը առաջարկում էր մարդկային պահանջմունքների մի դասակարգում, որտեղ օրգանական կամ առաջնային պահանջմունքներից բացի, կային նաև կրթությունից և վերապատրաստումից բխող երկրորդական պահանջմունքներ՝ դրանց թվում առանձնացնելով մոտ երկու տասնյակ պահանջմունքներ (հաջողության հասնելու, պատկանելիության, ագրեսիայի, անկախության, ընդդիմության, հարգանքի, պաշտպանության, գերիշխանության, ուշադրության գրավման, ձախողումից խուսափելու և այլն): Հետևաբար, ըստ Հ. Մյուրեյի այս պահանջմունքները մարդկանց համար հանդիսանում էին մոտիվացիայի աղբյուր:

1.2 ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Մարդու գործողությունները բխում են հստակ մոտիվներից և ուղղված են հստակ նպատակների: Մոտիվն այն է, ինչը դրդում է մարդուն գործողության: Չիմանալով մոտիվները՝ հնարավոր չէ հասկանալ, թե մարդն ինչու է ձգտում այս կամ այն նպատակին, հետևաբար հնարավոր չէ նաև հասկանալ վերջինիս գործողությունների իմաստն ամբողջությամբ: Ներկայիս հոգեբանության մեջ օգտագործվում են մոտիվացիայի տարբեր դասակարգումներ՝ **ներքին և արտաքին, դրական և բացասական, կայուն և անկայուն, ինչպես նաև ճանաչողական, սոցիալական** և այլն:

Եկեք մի փոքր խոսենք դպրոցում աշակերտների **ներքին և արտաքին** մոտիվացիաների տարբերությունների մասին: Ներքին մոտիվացիայի դեպքում աշակերտի խրախուսման շարժառիթները բխում են ներսից, կապված են իր սեփական հետաքրքրությունների, հույզերի և ցանկությունների հետ: Հետաքրքրվելով ինչ-որ բանով՝ աշակերտը ոգևորվում է, հետաքրքրության օբյեկտի հետ աշխատելիս դժվարություններ չի ունենում, և փոխհատուցում չի պահանջում [7, էջ 98]: Չնայած որ երկուսն էլ կարող են ունենալ իրենց օգտակարությունը, համենայնդեպս, ներքին մոտիվացիան շատ ավելի արդյունավետ է: Սա պայմանավորված է նրանով, որ տվյալ աշակերտը իրեն հանձնարարված աշխատանքը չի կատարում ուսուցչից շնորհակալություն կամ գովասանք ստանալու նկատառումով, այլ կատարում է, քանի որ գիտակցում է, որ դա իր պարտականությունն է որպես աշակերտ և կրթությունը անհրաժեշտ է իրեն հետագա նպատակներին հասնելու համար: Ներքին մոտիվացիա ունեցող մարդիկ բավարարվածություն են ստանում բուն գործողությունից և դրա կատարումից և ակնկալիքներ չունեն արտաքին աշխարհից: Առանձնացնենք ներքին մոտիվացիան խթանող մի քանի գործոններ՝

- **Մարտահրավեր**

  Աշակերտները մոտիվացվում են, երբ փորձում են հասնել մի նպատակի, որը բխում է իրենց անձնական հետաքրքրություններից, կապված է ինքնագնահատականի բարձրացման հետ, որտեղ գործողության արդյունքը հասանելի է և նպատակին հասնելը հնարավոր է, բայց ոչ շատ հեշտ:
- **Հետաքրքրություն**

  Սովորողի ներքին մոտիվացիան բարձրանում է, երբ ֆիզիկական միջավայրում ինչ-որ բան գրավում է նրա ուշադրությունը և ցանկություն է առաջանում սովորել ավելին:
- **Վերահսկողություն**

  Աշակերտները մոտիվացվում են, երբ իրենք են վերահսկում իրենց միջավայրը և սահմանում են հստակ նպատակներ, դրանց վրա աշխատելու տեմպը և այն ուղղությունը, որով շարժվելու են: Ցավոք, ավանդական կրթական համատեքստում վերահսկողության այս զգացումը գործնականում գոյություն չունի:
- **Համագործակցություն և մրցակցություն**

  Ներքին մոտիվացիան կարող է բարձրանալ այնպիսի իրավիճակներում, երբ սովորողը բավականություն է ստանում մեկ ուրիշին օգնելուց, ինչպես նաև այն դեպքերում , երբ կարողանում է համեմատել իր և մյուսների կատարած աշխատանքը, որտեղ ինքն ավելի շահեկան դիրքերում է:
- **Ճանաչում/Ընդունում**

  Աշակերտները սիրում են, երբ իրենց կատարած աշխատանքը և գրանցած հաջողությունները ճանաչվում և ընդունվում են ուսուցիչների, ծնողների ու դասընկերների կողմից [9, էջ 54]:
- **Նշանակալի ուսուցում**

  Աշակերտի մոտիվացիայի մեկ այլ կարևոր գործոններից է «նշանակալի ուսուցումը»: Այս ֆենոմենը վերաբերում է գիտելիքների կամ հմտությունների ձեռքբերմանը, որոնք կարող են օգտակար լինել աշակերտի համար իր առօրյա կյանքում, կապված լինել իր առօրյա մտահոգությունների հետ:

Արտաքին մոտիվացիայի դեպքում սովորողի խրախուսման շարժառիթները գալիս են արտաքին աշխարհից, աշխատանքը կատարվում է ակնկալիքով, որ լինելու է սպասված պարգևատրումը՝ նյութական կամ ոչ նյութական (պատվոգիր, մրցանակ, նվեր, գովաբանում, լավագույն աշակերտի կոչում և այլն) ինչպես նաև, որպեսզի բավարարվեն շրջապատի մարդկանց (ծնողներ, ուսուցիչներ, դասընկերներ) պահանջները: Ուսուցչի գործն ավելի արդյունավետ կլինի, եթե կարողանա արտաքին մոտիվացիա ունեցող աշակերտների մոտ

արթնացնել ներքին մոտիվացիա: Դա, իհարկե, բարդ գործընթաց է, բայց կարելի է հասնել դրան հետևելով արտաքին մոտիվացիան խթանող հետևյալ գործոններին՝

- **Կարգավիճակը** անձի ընկալումն է, թե ինչպիսին է նա շրջապատի աչքերում: Կարգավիճակը վարքագծի վրա ազդող կարևոր խթաններից է և մոտիվացիայի աղբյուր է հանդիսանում:
- **Հստակությունն** այն է, երբ աշակերտի առջև դրված են կոնկրետ նպատակներ և քայլերի հաջորդականություն, այսինքն նրա գործողությունները պլանավորված են և դա, միանշանակ, դրական ազդեցություն է ունենում նրա աշխատանքի արդյունավետության վրա:
- **Անկախությունը** սեփական միջավայրը վերահսկելու ընկալումն է, զգացողությունը, որ ունես ընտության հնարավորություն: Աշակերտին լիարժեք անկախություն տալը կարող է լինել բարդ: Սակայն կարելի է գծել անտեսանելի սահմաներ, որտեղ նա կարող է գործել անկախ, կայացնել որոշումներ ՝ առանց ուսուցչի միջամտության:
- **Ազնվության** դեպքում խոսքը աշակերտների միջև ազնիվ փոխահարբերությունների մասին է: Դասարանում պետք է տիրի առողջ մրցակցային մթնոլորտ, որը ևս կհանդիսանա արտաքին մոտիվացիայի աղբյուր:

Եթե մոտիվացիան դիտարկենք երեխայի հուզական ընկալման տեսանկյունից, ապա այն լինում է 2 տեսակի՝ **դրական և բացասական:**

Դրական մոտիվացիան բլիթի քաղաքականությունն է, որը դրսևորվում է գովաբանությունների, պարգևատրումների, արտոնությունների տեսքով՝ ուղեկցվում է դրական հույզերով՝ ուրախություն, հաճույք: Բացասական մոտիվացիան մտրակն է՝ պատիժների, պահումների, քննադատության տեսքով, որին ավելանում են բացասական հույզերը և զգացմունքները՝ վախ, տհաճություն, զայրույթ: Այստեղ կարևոր է այն դիտարկումը, որ մոտիվացիայի մշտական կիրառումը կարող է կորցնել իր ազդեցությունը: Օրինակ, երբ աշակերտը վստահ է, որ առօրյա ուսուցման գործընթացում չնչին սխալների դեպքում ստանալու է ուղղակի բանավոր նկատողություն և յուրաքանչյուր ճիշտ կատարված պարզունակ առաջադրանքի համար արժանանալու է գովասանքի, ապա ժամանակի ընթացքում այդ նկատողությունն ու գովասանքը դադարում է որևէ արժեք ունենալ աշակերտի համար, որը նույնպես բացասական կարող է ազդել նրա մոտիվացիայի վրա: Մոտիվացիայի հաջորդ դասակարգումն է՝ **կայուն և անկայուն**: Կայուն է համարվում այն մոտիվացիան, որը հիմնված է մարդու պահանջմունքների վրա, քանի որ այն լրացուցիչ ամրապնդում չի պահանջում, և հետևաբար, անկայուն է այն մոտիվացիան, որը պահանջում է լրացուցիչ ամրապնդում [8 էջ 365]:

Որպես մոտիվացիայի տեսակներ կարելի է առանձնացնել **ճանաչողական** և **սոցիալական** մոտիվներ: Ուսումնական առարկայի բովանդակության հանդեպ հետաքրքրությունը խոսում է ճանաչողական մոտիվների առկայության մասին: Ուսման ընթացքում այլ մարդկանց հանդեպ հետաքրքրությունն էլ խոսում է սոցիալական մոտիվների մասին:

Ե՛վ ճանաչողական, և՛ սոցիալական մոտիվները կարող են ունենալ տարբեր մակարդակներ: Ճանաչողական մոտիվները լինում են լայն ճանաչողական (կողմնորոշում դեպի նոր գիտելիքներ, փաստեր, երևույթներ, օրինաչափություններ), ուսումնաճանաչողական (գիտելիքի ձեռքբերման տարբերակների հանդեպ հետաքրքրություն, ինքնուրույն գիտելիքի ձեռքբերման փորձեր), ինքնակրթվելու (լրացուցիչ գիտելիքներ ստանալու և ինքնակատարելագործման ծրագրի կառուցման հակումներ):

Սոցիալական մոտիվները կարող են ունենալ հետևյալ մակարդակներ՝ լայն սոցիալական մոտիվներ (պարտավորվածություն և պատասխանատվություն), նեղ սոցիալական կամ դիրքային մոտիվներ (շրջապատի հանդեպ հստակ դիրք զբաղեցնելու և նրանց կողմից ընդունվելու ձգտում), սոցիալական համագործակցության մոտիվներ (այլ մարդկանց հետ փոխազդեցության տարբեր ձևերի հանդեպ հակում):

Տարբեր մոտիվներ ունենում են իրենց տարբեր դրսևորումները ուսումնական գործընթացում: Օրինակ՝ լայն ճանաչողական մոտիվները դրսևորվում են խնդիրների լուծման, լրացուցիչ տեղեկատվության համար ուսուցչին դիմելու մեջ, ուսումնաճանաչողական մոտիվները՝ խնդիրների լուծումների որոնման ինքնուրույն քայլերում, ինքնակրթության մոտիվները հայտնաբերվում են, երբ աշակերտը դիմում է ուսուցչին՝ ուսումնական աշխատանքի ռացիոնալ կազմակերպման, ինքնակրթության իրական գործողությունների համար:

Սոցիալական մոտիվները դրսևորվում են գործողություններում, որոնք վկայում են աշակերտի մոտ պատասխանատվության և պարտքի մասին, դիրքային մոտիվները դրսևորվում են տարեկիցների հետ հաղորդակցվելու և նրանց գնահատականին արժանանալու, նախաձեռնողականության և ընկերներին օգնելու ձգտումների մեջ: Սոցիալական համագործակցության մոտիվներն են խմբային աշխատանքների հանդեպ ձգտումը և դրանք ռացիոնալ իրականացնելու գիտակցումը: Գիտակցված մոտիվները արտահայտվում են աշակերտի ունակությամբ, թե ինչն է նրան գրավում, կարիքների դասակարգման ունակությամբ՝ ըստ առաջնահերթության: Իրապես ազդող մոտիվներն արտահայտվում են առաջադիմության և հաճախելիության, ուսումնառության կատարման և դրանից խուսափելու ձևերի, լրացուցիչ առաջադրանքների կատարման կամ դրանցից խուսափման մեջ:

Ուսումնասիրելով մոտիվացիայի տեսական հիմքերը՝ պարզեցին, որ մոտիվացիան ունի նաև 5 մակարդակներ: Դրանք են՝

1. *Դպրոցում սովորելու մոտիվացիայի բարձր մակարդակ:* Այսպիսի երեխաներն ունեն ճանաչողական մոտիվ, ձգտում են հնարավորինս լավ կատարել դպրոցում հանձնարարված բոլոր առաջադրանքները: Աշակերտները հստակ հետևում են ուսուցչի բոլոր հրահանգներին, բարյացակամ են և պատասխանատու, շատ են մտահոգվում, եթե չեն ստանում բավարար գնահատական:
2. *Լավ դպրոցական մոտիվացիա:* Աշակերտները հաջողությամբ հաղթահարում են ուսումնական գործընթացը: Մոտիվացիայի նման մակարդակը համարվում է միջին նորմ:
3. *Դրական վերաբերմունք դպրոցին:* Այս երեխաներին դպրոցը գրավում է ոչ կրթական գործունեությամբ: Երեխաները բավականին լավ են զգում իրենց դպրոցում, քանի որ շփվում են ընկերների և ուսուցիչների հետ: Նրանց դուր է գալիս աշակերտ լինելու ինքնազգացողությունը՝ ունենալով դպրոցական պայուսակ, բազմազան գրենական պիտույքներ և այլն: Ճանաչողական մոտիվներն այս երեխաների մոտ ձևավորված են նվազագույն մակարդակով, և ուսումնական գործընթացը քիչ է գրավում:
4. *Ցածր դպրոցական մոտիվացիա:* Այս երեխաները անտարբերությամբ են այցելում դպրոց, նախընտրում են բաց թողնել դասերը: Դասաժամերին հաճախ զբաղվում են կողմնակի գործերով, խաղերով: Լուրջ դժվարությունների են բախվում ուսումնական գործընթացում, գտնվում են դպրոցում լուրջ ադապտացիոն փուլում:
5. *Բացասական վերաբերմունք դպրոցի հանդեպ, դեզադապտացիա:* Այսպիսի երեխաները լուրջ խնդիրներ ունեն սովորելու հետ: Նրանք չեն կարողանում սովորել, խնդիրներ են ունենում համադասարանցիների ու ուսուցիչների հետ: Դպրոցը շատ հաճախ նրանց կողմից ընկալվում է որպես թշնամական միջավայր, որտեղ գտնվելը դառնում է անտանելի: Աշակերտները կարող են ագրեսիվորեն դրսևորել իրենց, հրաժարվում են կատարել առաջադրանքները, չեն հետևում այս կամ այն նորմերին ու կանոններին: Հաճախ նման դպրոցականների մոտ նկատվում են նյարդահոգեբանական խախտումներ [5, էջ 21]:

Այսպիսով հասկացանք, որ անձի ցանկացած գործողության հիմքում ընկած են որոշակի շարժառիթներ, պահանջմունքներ, կարիքներ, որոնք էլ իրենց հերթին ձևավորում են անձի վարքագիծը այս կամ այն երևույթի նկատմամբ:

Մոտիվացիայի դասակարգումների ու տեսակների մասին ընդանուր պատկեր ունենալու համար հետևեք գծագիր 1-ին և գծագիր 2-ին:

Գծապատկեր 1



Գծապատկեր 2

Մոտիվացիայի 5 մակարդակները



ԳԼՈՒԽ 2 ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

2.1 ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Այսօր տարրական դասարանների ուսուցիչներն ավելի ու ավելի են բողոքում, որ աշակերտների մոտ ուսման մոտիվացիան նվազել է կամ իսպառ բացակայում է: Երեխաները չեն ցանկանում սովորել, անտարբերություն են ցուցաբերում գիտելիքների, գնահատականների նկատմամբ, չեն ձգտում նոր բաներ սովորել: Ուսուցիչներին հետևելով՝ ուսման նկատմամբ նման բացասական վերաբերմունքը անհանգստացնում է ծնողներին, հատկապես նրանց, ում երեխաները պատրաստվում են առաջին դասարան ընդունվել: Մեծահասակները հասկանում են, որ հաջող ուսուցման համար, բացի հաշվելու և կարդալու կարողությունից, երեխաները պետք է սովորելու ցանկություն ունենան: Բայց ինչպե՞ս նման ցանկություն սերմանել երեխայի մեջ: Հոգեբաններն ասում են, որ երեխան, առաջին հերթին, պետք է դաստիարակչական դրդապատճառներ ունենա: Ուստի, բավական չէ միայն նախադպրոցականին սովորեցնել գործնական հմտություններ և մտածել, որ նա պատրաստ է դպրոցին: Պետք չէ մոռանալ մոտիվացիոն պատրաստակամության մասին և այն ձևավորել երեխայի առաջին դասարան գնալուց շատ առաջ: Գիտությունը վաղուց ապացուցել է, որ նոր գիտելիքի (մոտիվացիայի) ցանկությունը գենետիկորեն բնորոշ է մարդկանց. նույնիսկ հին ժամանակներում նոր բան հայտնաբերող մարդը զգացել է ուրախություն, ցնծություն:

Դպրոցում աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ եթե երեխան երկու-երեք ամիս տևողությամբ որևէ հարցում կայուն դժվարություն ունի և այս դժվարությունը որևէ կերպ, որևէ ազդեցությամբ փոփոխության չի ենթարկվում, վիճակը չի բարելավվում, մենք գործ ունենք խնդրի հետ, որը պետք է ինչ-որ կերպ հաղթահարել կամ բացահայտել խնդրի առաջացման պատճառները: Ուսումնական խնդիրների պատճառները կարող են լինել ֆիզիոլոգիական, սոցիալական և հոգեբանական:

Ֆիզիոլոգիական պատճառները երեխայի առողջության տարբեր առանձնահատկություններն են՝ երեխայի տարած հիվանդությունները, վիրահատությունները, երեխայի շարժողական ակտիվության մակարդակը, երեխայի նյարդային համակարգի տիպը և դրա առանձնահատկությունները, երեխայի դիմադրողական մակարդակը: Սոցիալական պատճառները կարող են լինել ընտանիքում երեխայի փոխհարաբերությունները, անբարենպաստ դաստիարակության մեթոդները, ծնողների ոչ պատվաբեր վարքը և

վերաբերմունքը երեխայի նկատմամբ, ընտանեկան լուրջ կոնֆլիկտները, ինչպես նաև երեխայի փոխահարբերությունները իր հասակացիների հետ: Հոգեբանական պատճառները երեխայի ինտելեկտուալ առանձնահատկություններն ու կարողություններն են՝ նրա հիշողության, մտածողության, ուշադրության առանձնահատկությունները:
Այս երեք պատճառների համախումբը ստեղծում է ուսումնական դժվարություններ: Ուսումնական դժվարությունները կարող են արտահայտվել երկու ձևով կամ երկու ոլորտում՝

- Առաջինը հենց բուն ուսումնական առանձնահատկությունների խնդիրներն են: Այսինքն՝ երեխան ձախողում է կոնկրետ առարկայի շրջանակներում, չի կարողանում ընկալել, յուրացնել, դժվարանում է կատարել հանձնարարությունները, հասկանալ, բացատրել իր մտքերը:
- Երկրորդ խնդիրը անձնային որակների դաշտից է: Այսինքն՝ երեխայի մոտ կարող է դրսևորվել ինքնուրույնության պակաս, նախաձեռնողականության պակաս, հրահանգներով աշխատելու կարողության պակաս կամ ենթարկվելու դժվարություններ:

Այսպիսով, մենք հասկանում ենք, որ ուսումնական մոտիվացիան շատ կարևոր առանձնահատկություն է, որը ձևավորվում է մի շարք այնպիսի գործոնների ազդեցությամբ, ինչպիսիք են ծնողների վերաբերմունքը, մանկապարտեզը, ինչպես նաև հենց բուն ուսումնական միջավայրը՝ դպրոցը, ուսուցիչները, ուսումնական նյութերը: Ուսումնական մոտիվացիան ևս անձնային ոլորտի խնդիր է, և եթե, օրինակ, երեխան ունի բարձր ընդունակություններ, բայց չունի ուսումնական մոտիվացիա, սա ևս կարող է պատճառ հանդիսանալ, որպեսզի երեխան ունենա ուսումնական դժվարություններ:
Մեզ մոտ հնարավոր է նաև հարց առաջանալ, թե ինչու է կարևոր այս խնդիրը ուշադրության կենտրոնում պահել և լուծումներ փնտրել: Մենք լավ գիտենք, որ դպրոցահասակ երեխաները՝ հատկապես տարրական դպրոցի երեխաները, իրենց ամբողջ կյանքն ու ինքնադրսևորման միջավայրը համարում են դպրոցը: Եվ եթե այս գործընթացում, այս միջավայրում որևէ բան խանգարում է նրանց ինքնադրսևորման գործընթացին կամ ինքնադրսևորվման գործընթացը հագեցած է անհաջողություններով, քննադատությամբ, մեղադրանքներով, վիրավորանքներով, ապա սա ուղղակիորեն ազդում է երեխայի ինքնագնահատականի և հետագա կյանքի ձեռքբերումների վրա: Կարևոր է հաշվի առնել, որ հաջողության զգացումը, հաջողության ձգտելու ցանկությունը և հաջողության հասնելու մոտիվացիան ձևավորվում է հենց դպրոցական տարիքում: Երեխայի կյանքի զարգացման ընթացքում ունենք շրջաններ, երբ կոնկրետ որակներ են ձևավորվում և տարրական դպրոցի

տարիքը հենց հաջողության հասնելու մոտիվացիայի ձևավորման տարիքն է: Դրանից հետո այս մոտիվացիան և նպատակասլացությունը ձևավորելը շատ դժվար կլինի: Հոգեբանների կարծիքով ծնողները մեծ դերակատարում ունեն երեխային մոտիվացնելու գործում: Հետևաբար անհրաժեշտ է ապագա աշակերտի մոտ զարգացնել ուսուցման այնպիսի մոտիվներ, ինչպիսիք են.

- սովորելու և գիտելիքներ ձեռք բերելու ցանկություն,
- վայելել ուսուցման գործընթացը,
- դպրոցում ակադեմիական հաջողությունների ձգտում,
- առաջադրանքների ճիշտ և ջանասիրաբար կատարման ձգտում,
- դասընկերների և ուսուցիչների հետ դրական հաղորդակցության ձգտում,
- դպրոցի պահանջներին ենթարկվելու ունակություն,
- ինքնատիրապետման հմտություններ

Նման վերաբերմունք ապագա ուսումնառության նկատմամբ ծնողները պետք է սերմանեն իրենց երեխայի մեջ վաղ մանկությունից, երբ նա նոր է սկսում ուսումնասիրել աշխարհը: Իհարկե ուսուցիչը ծնողի հետ հավասար ունի կարևոր դերակատարում աշակետի ուսուցման մոտիվացիայի բարձրացման գործում: Եկեք խոսենք մի շարք ռազմավարությունների մասին, որոնք դրդում են տարրական դասարանում սովորող աշակերտին մոտիվացվել: Դրանք հետևյալն են՝

- Խրախուսել աշակերտին դպրոցում լավ վարքագիծ դրսևորելու համար,
- Դասերը դարձնել մասնակցային, ներառական և հանդուրժող. աշակերտը կարող է մասնակցել առանց քննադատության կամ ծաղրի ենթարկվելու վախի,
- Տալ մրցանակներ կարճ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ նպատակների իրականացման համար,
- Վերլուծել հնարավոր հաջողությունների ու անհաջողությունների պատճառները,
- Օգտագործել խմբային աշխատանքը որպես միջոց բոլորին դասին ներգրավելու հարմար,
- Ուսուցումը հարմարեցնել տարբեր կարողություններ ունեցող աշակերտներին՝ չմոռանալով թույլ կարողություններ ունեցող աշակերտներին, քանի որ հենց նրանք են պահանջում ավելի մեծ ուշադրություն և բարձր մոտիվացիա:

Հետևաբար, գալիս ենք այն եզրահանգման, որ եթե ծնողներն ու ուսուցիչները միախմբված աշխատեն, ի օգուտ աշակերտի, կարող են հասնել դրական արդյունքի:

2.2 ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՎԱԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Դպրոցական մոտիվացիայի առկայության հարցը հատկապես սուր է դեռահասների համար, քանի որ այս տարիքում է, որ շատերի մոտ դպրոց հաճախելը մեծ ոգևորություն չի առաջացնում, իսկ մի մասը կարող են ընդհանրապես կորցնել հետաքրքրությունը դասի նկատմամբ: Եթե դիտարկենք մեկ այլ տեսանկյունից, հենց այս տարիքում է, երբ որոշ դեռահասներ փորձում են ավելի կատարելագործվել ուսումնական գործընթացում, որպեսզի ինքնաձևավորվեն, ինքնակրթվեն և փորձեն դպրոցական ծրագրի սահմաններից դուրս գալ: Այսպիսի աշակերտները ինքնակրթական գործունեության մոտիվները կապում են ավելի հեռահար նպատակների հետ, մասնագիտության ընտրության կենսական հնարավորությունների հետ: Ավագ դպրոցի աշակերտների համար դասերի նկատմամբ հետաքրքրությունը մեծապես կախված է ուսուցչի ուսուցման անհատականությունից և բնույթից: Նրանք ցանկանում են ավելի լավը դառնալ և գրեթե ամեն ինչով գերազանցել դասընկերներին: Այս դեպքում վտանգ կա, որ աշակերտի ձախողման դեպքում կարող է թերարժեքության բարդույթ առաջանալ, որն էլ կարող է հանգեցնել գիտելիք ձեռք բերելու դժկամության, մոտիվացիայի անկման: Ուստի կարևոր է երեխային բացատրել, որ պետք չէ ինչ-որ մեկից լավը դառնալ, պետք է գերազանցել ինքդ քեզ:

Հետևաբար, ավագ դասարանում գտնվող աշակերտների շրջանում որքան էլ հարուստ մոտիվացիոն շարժառիթներ ձևավորված լինեն, այնուամենայնիվ, տարիքային այս փուլն իրենում ներառում է նաև ուսման մոտիվացիայի անկման մի շարք պատճառներ, որոնցից հիմնականները հետևյալն են՝

- ✓ Դեռահասների մոտ նկատվում է <<հորմոնալ պայթյուն>> և դեռ հստակ ձևավորված չէ ապագայի պլանները,
- ✓ Ուսուցիչ- աշակերտ վատ փոխհարաբերությունները,
- ✓ Աշակերտի անլուրջ վերաբերմունքը դասի և ուսուցչի նկատմամբ,
- ✓ Ծնողների և ուսուցիչների կողմից աշակերտի չհասկացված լինելը,
- ✓ Աշակերտի կողմից դասավանդվող առարկայի անձնապես կարևորությունը չգիտակցելը,
- ✓ Աշակերտի մտավոր թույլ զարգացումը,
- ✓ Աշակերտի կողմից սեփական գիտելիքի մակարդակի չիմացությունը,
- ✓ Ուսումնական գործընթացի անարդյունավետությունը,
- ✓ Սովորելու նպատակի չհասկացվածությունը:

Եվ՛ ուսուցիչները, և՛ ծնողները հասկանում են, որ դպրոցական մոտիվացիայի բացակայության հետևանքները կարող են իսկապես բացասական լինել դրանից տառապող աշակերտների համար: Հետևաբար, վերջին տասնամյակների ընթացքում մոտիվացիայի մասնագետները փորձել են սովորողների մոտ այս խնդիրը լուծելու ուղիներ գտնել:
Ինչպես արդեն տեսանք, չկա որևէ մեկ տարր, որն ամբողջովին բացատրում է, թե ինչու աշակերտը չունի սովորելու մոտիվացիա: Ուստի հնարավոր չէ գտնել մեկ լուծում բոլոր աշակերտների համար: Այնուամենայնիվ, կան գործիքներ, որոնք կարող են օգնել մասամբ լուծել այս խնդիր: Դրանք են՝

- ✓ Սովորեցնել դեռահասին հստակ ձևակերպել իր նպատակը, ինչպես նաև այդ նպատակի իրականացման ժամկետները,
- ✓ Ցուցաբերել հետաքրքրություն աշակերտի նախասիրությունների նկատմամբ,
- ✓ Ցուցաբերել վստահություն աշակերտի առաջադիմության և հաջողությունների նկատմամբ,
- ✓ Շահել աշակերտի վստահությունը, խորհուրդներ տալ,
- ✓ Ներառել առօրյային վերաբերող թեմաները դասապրոցեսի մեջ,
- ✓ Լսել և կարևորել աշակերտի կարծիքը դասի ընթաքցում այս կամ այն թեմայի շուրջ քննարկումներ անելիս,
- ✓ Օգտագործել խաղերը որպես ուսուցողական գործիք դասը զվարճալի դարձնելու համար,
- ✓ Դասերը դարձնել մասնակցային, ներառական և հանդուրժող,
- ✓ Դասերից հետո ունենալ հանդիպումներ, խոսել մարդկանց միջև փոխհարաբերությունների և այլ կարևոր արժեքների մասին: Ինչու ոչ, երբեմն աշակերտի համար լինել ավագ ընկեր:

Այսպիսով, հասկանում ենք, որ դպրոցական մոտիվացիայի բացակայությունը կարող է ամեն տեսակի բացասական ազդեցություն ունենալ սովորողների վերջնարդյունքների, ինչպես նաև նրանց հուզական վիճակի վրա: Ուստի անհրաժեշտ է թե՛ դպրոցում, թե՛ դպրոցից դուրս փորձել այն բարելավել և զարգացնել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսումնասիրելով մոտիվացիայի տեսական հիմքերը, վերլուծելով բազմաթիվ հին փիլիսոփաների ու գիտնականների աշխատությունները, բացահայտելով տարբեր տարիքային առանձնահատկություններ ունեցող աշակերտների ուսուցման մոտիվները, ինչպես նաև կատարելով փորձի փոխանակում այլ ուսուցիչների հետ գալիս ենք հետևյալ եզրահանգումների՝

- Մոտիվացիան ներքին վիճակ է, ցանկություն, որն ակտիվացնում է վարքագիծը և ուղղորդում դեպի նպատակը,
- Մոտիվացիան առաջացել է լատիներեն <<movere>> բառից, որը թարգմանաբար նշանակում է շարժվել:
- Ներկայիս հոգեբանության մեջ օգտագործվում են մոտիվացիայի տարբեր տեսակներ՝ ներքին և արտաքին, դրական և բացասական, կայուն և անկայուն, ինչպես նաև ճանաչողական, սոցիալական,
- Ներքին, երբ աշակերտը սովորում է հետաքրքրությունից դրդված, երբ դասը հաճույք է պատճառում նրան, երբ ավելի շատ գիտելիք է ցանկանում ստանալ: Արտաքին, երբ ներգործում են արտաքին գործոններ՝ ծնողներին գոհացանել, բարձր գնահատական ստանալ, ընդունվել ուսհասատատություն և այլն:
- Դրական մոտիվացիան դրսևորվում է գովաբանությունների, պարգևատրումների, արտոնությունների տեսքով, իսկ բացասականը՝ պատիժների, պահումների, քննադատության տեսքով:
- Կայուն է համարվում այն մոտիվացիան, որը հիմնված է մարդու պահանջմունքների վրա, և հետևաբար, անկայուն է այն մոտիվացիան, որը պահանջում է լրացուցիչ ամրապնդում:
- Ուսումնական առարկայի բովանդակության հանդեպ հետաքրքրությունը խոսում է ճանաչողական մոտիվների առկայության մասին, իսկ ուսման ընթացքում այլ մարդկանց հանդեպ հետաքրքրությունը՝ սոցիալական մոտիվների:
- Մոտիվացիան ունի նաև 5 մակարդակներ՝ բարձր դպրոցական մոտիվացիա, լավ դպրոցական մոտիվացիա, դրական վերաբերմունք դպրոցին, ցածր դպրոցական մոտիվացիա, բացասական վերաբերմունք դպրոցին,
- Նախադպրոցականին բավարար չէ միայն գործնական հմտություններ և մտածել սովորեցնելը: Պետք չէ մոռանալ մոտիվացիոն պատրաստակամության մասին և այն ձևավորել երեխայի առաջին դասարան գնալուց շատ առաջ,

- Հոգեբանների կարծիքով ծնողները մեծ դերակատարում ունեն երեխային մոտիվացնելու գործում,
- Ուսուցիչը ծնողի հետ հավասար ունի կարևոր դերակատարում աշակետի ուսուցման մոտիվացիայի բարձրացման գործում,
- Աշակերտին խրախուսելը, դասերը մասնակցային, ներառական և հանդուրժող դարձնելը, խմբային աշխատանքները կատարելը, թույլ կարողություններ ունեցող աշակերտներին օգնելը, աշակերտի կարծիքը լսելն ու կարևորելը, մրցակցային առողջ մթնոլորտ ստեղծելը մտնում է ուսուցչի պարտականությունների մեջ և համարվում է մոտիվացիայի մեծ աղբյուր,
- Ավագ դպրոցի աշակերտների համար դասերի նկատմամբ հետաքրքրությունը մեծապես կախված է ուսուցչի ուսուցման անհատականությունից և բնույթից,
- Դեռահասների ինքնակրթական գործունեության մոտիվները կապվում են ավելի հեռահար նպատակների հետ, ինչպիսին են մասնագիտության ընտրությունը և ապագայի պլանները:

Որպես ամփոփում պետք է նշել, որ դաստիարակման նպատակը, ամեն դեպքում, ըմբռնելի և գործող մոտիվների ճիշտ համադրելն է, ինչպես նաև ճիշտ ժամանակին ճիշտ և հաջողված ուսումնառությանը կարևորություն տալը, իսկ հաջող ուսուցումն առանց մոտիվացիայի անհնար է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դրական հոգեբանություն, Կրթության դրդապատճառը. Ինչն է պետք մեր երեխաներին խթանելու համար, հրատ.: 2020թ.,
2. Հայկ Դավեյան, Աշակերտների կրթական ձեռքբերումների անհավասարության կրճատման հնարավորությունները դպրոցի և դասարանի մակարդակում. հրատ.: Երևան, 2019թ.,
3. Պետրոսյան Մ, Ջավադյան Ա, Ամիրյան Դ, Անձը և պաշտոնը, հրատ.: Երևան 2013թ., 343 էջ
4. Ութ գործոններ, որոնք ազդում են ուսանողների դրդապատճառի վրա կրթության մեջ, հրատ.: 2020թ.,
5. Маркова А.К. и др. Формирование мотивации учения: Книга для учителя. – М., 2008,
6. Маклаков А. Г. Общая психология: Учебник для вузов. — СПБ: Питер, 2008. — 583 с.,
7. Шишкоедов П. Н. Общая психология. - Москва: Эксмо, 2009. – 284 с.,
8. Хекхаузен Х. Мотивация и деятельность. Т. 1: Пер. с нем. — М., 1986, 408 с.,
9. Malone, T. & Lepper, Making Learning Fun: A Taxonomy of Intrinsic Motivations for Learning, Hillsdale, NJ: 1987

Էլեկտրոնային պաշարներ

10. http://boon.am/learning-difficulties/
11. http://194school.org/2021/11/how-to-motivate-learners/
12. https://podarilove.ru/hy/kak-povysit-svoyu-motivaciyu-k-uchebe-motivaciya-k-obucheniyu/